Ստեփանավանի N1 վարժարան

Ուսումնական հաստատության
X բնագիտական դասարանի դասղեկի
Աշխատանքային տարեկան պլան
2020-2021ուստարի

Դասղեկ՝ Լ. Չոբանյան

Դասղեկի աշխատանքային տարեկան պլան

2020-2021ուստարի

Դպրոց - Ստեփանավանի N1 վարժարան

Դասարան -10-րդ բնագիտական

Հաշվի առնելով և՛ ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և՛ տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և՛ դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի գրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, ,,Մտքի հրավառություն ,, գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

Դասի համարը	Դասի թեման
1	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:
3	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
4	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:
5	Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ:
6	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
7	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:
8	Ճակատագի՞ր, թե սեփական բախտի տնօրինում:

9	Հոգու կրթություն:
10	Հոգու կրթություն և մտքի թռիչք:
11	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:
12	Աշնանային էքսկուրսիա : Դիտել ներկայացում Պարոնյանի անվան թատրոնում:
13	Էքսկուրսիայից ստացած տպավորության քննարկում, ներկայացման վերլուծություն:
14	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:
15	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:
16	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
17	Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի:
18	Հայոց բանակ
19	Մարմնակրթություն, առողջապահություն:
20	Հիգիենիկ հարցեր:
21	Մարդկային արատներ:
22	Մարդկային արատներ:
23	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
24	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
25	Սերը որպես տիեզերական զգացմունք:
26	Հանճարները սիրո մասին:
27	Սերը ոգեշնչման աղբյուր:
28	Խրատանի, առածանի, մեկնաբանություններ:
29	Ինքնատիրապետման մի քանի հարցեր:
30	Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
31	Հաղթանակների ամիս մայիս:
32	Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ):
33	Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը:
34	Ամփոփիչ դաս:

Նախատեսում եմ նաև ,,Բաց դաս/եր/,,,որի/որոնց/թեմայի ընտրությունը կկատարեն երեխաները՝ ընտրելով իրենց ավելի հոգեհարազատ թեման: